

6340

№ 7

ԳԵՂԵՑԻԿ
ՈՐՍՈՐԴԱԿԱՆ
ՀՐԵՑԱՆԸ

„ԲԱՐԻ ԼՈՒՐԻ“
ՀՐԵՏԵՐԱՌԻԹԻՆ

Красивое охотничье
РУЖЬЕ

ԲԱԳՈՒ

Տպար. Ա. Մ. Թառայեանցի և Լ. Գ. Միրզաբեանցի
1908

Тип. А. Н. Тараева и Л. Д. Мирзаянцъ
Баку.

266

4-42

ԳԵՂԵՑԻԿ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՀՐԱՅԱՆԸ:

Բարի Հովիւը կորած ոչխարի ետեից ման է գալիս մինչև որ նրան գտնում է և գտածը դնում է ուսերի վրա և տանում նրան Հօր տունը. սա Տէր Յիսուսն ինքն է ասում մեզ իր խօսքի մէջ: Մեր փորձառութիւնով էլ սա հաստատվում է: Երիտասարդ անգլիացի ագնւակաւորն էլ, որի մասին այսօր կամենում եմ պատմել սիրելի ընթերցողին, անպատճառ այո և ամէն կ'ասէր դրան: Այս երիտասարդի վարքի դէմ ոչ ոք չէր կարող մի բան ասել, նա մի անարատ անուն էր վաստակել, հաւատարիմ և ուղղամիտ էր, ամենքից յարգված, աղքատների և հիւանդների բարերար, իսկ ինչ վերաբերումը էր նրա կրօնականին՝ նա բարեպաշտ էր, ինչպէս հարիւր հազարաւոր իրանպէսները, որոնք կարողանում են պահել իրանց արտաքին ագնութեան և բարոյականութեան սահմաններում: Բայց ինչպէս առհասարակ սովորական մի երեւոյթ է, հանդերձ այդ բոլորի նա Քրիստոս Յիսուսով յայտնված ձգմարիտ լուսոյ թշնամի էր: Նա կար-

ծում էր թէ բաւական է իրան, որ կարող է ասել այս խօսքերը, ինչ միանգամ աւետարանի հարուստ պատանին ասեց Տէր Յիսուսին. «Այդ ամենն իմ երեխայութիւնից պահել եմ. էլ ի՞նչ բանով եմ պահաս»:

Այդ երիտասարդ ազնւականի կեցած տեղում ապրում էր և մի ուրիշ մարդ, որը այս կարծիքի չէր, և սա Թէննետն էր, Աստուծոյ սրտի ուզածի պէս մի մարդ, մի հաւատարիմ մշակ իր Տիրոջ այգիի մէջ: Աստուծոյ շնորհքով ճանաչել էր նա, որ ինքնարդարութեան հանդերձը կեղտոտ մի հանդերձ է և չէ կարող ծածկել մարդին այն Աստուծոյ աչքերի առջև, որ քննում է սիրտն ու երիկամունքները: Նա շատ լաւ ճանաչում էր երիտասարդ ազնւականին և նրան Յիսուսի ոտների մօտ բերելու ջերմ փափագ էր զգում. սակայն նրան մօտենալու ամեն փորձերը անաջող էին անցնում՝ նրա բռնած թշնամական դիրքի պատճառով: Մնում էր միայն մի միջոց, այն է՝ նրա համար աղօթք անել: Թէննետը աղօթում էր ջերմեռանդ և վրստահ էր, որ Աստուած իր աղօթքը լսելու է: Նա բոլորովին համոզված էր, թէ ետ ու առաջ իր երիտասարդ բարեկամի համար հասնելու է փրկւթեան ժամը: Նա մի անգամ յայտնեց այդ իր համոզմունքը մի քրիստոնեա բարեկամի:

Վերջինս ճանաչում էր ազնւական երիտասարդին, ու պատմեց նրան այդ:

Գուցէ ընթերցողը մտածէ, թէ այն քրիստոնեայի նրա համար ունեցած կարեկցութիւնը պիտի շարժէր երիտասարդի սիրտը և համոզեցրած լինէր նրան, թէ իր դրութիւնը կարգին չէր: Բայց ոչ, բոլորովին դրա հակառակը եղաւ: Նրա սիրտն ևս աւելի խստացաւ և նրա ատելութիւնը Թէննետի դէմ աւելի սաստկացաւ: Նա զգուշութեամբ խոյս էր տալիս նրա ճանապարհից և աշխատում էր որ բնաւ չը հանդիպէ նրան, անուանում էր նրան կեղծաւոր և կորագլուխ, որ աշխատում է միայն մարդկանց խելքից հանել: Բայց Թէննետը ուշ չէր դարձնում այս տեսակ խօսքերի վրա, այլ իր աղօթող սրբտի վրա շարունակ կրում էր երիտասարդին, հաստատ համոզված լինելով, որ Տէրը իր ժամանակին պատասխանելու է նրա աղօթքին:

Այսպէս շատ ամիսներ էին անցել և ամեն բան մնում էր առաջվայ պէս: Մի անգամ Թէննետը եկել էր հարեաններից մէկի տունը: Պատուհանից նայելով տեսնում է, որ անտառի ծայրից մի որսորդ մօտենում է նոյն տանը: Լաւ նայելուց յետոյ ճանաչում է երիտասարդ ազնւականին: Միշտ աւելի մօտենում է նա և—վերջապէս գալիս է ու մտնում սենեակը: Երևակա-

յեցէք, թէ նա ինչպէս է շփոթվում, երբ տեսնում է իր առջև այն մարդին, որից նա միշտ փախչում էր: Ի՞նչ անի հիմա: Մնա՞ թէ գուրս գայ ու գնա՞: Սակայն մինչև նրա մի որոշումի գալը՝ Թէննետը մօտենում է նրան, շատ սիրով ձեռքը սղմում և սկսում է խօսել նրա հետ որսորդութեան վերաբերեալ: Բաւական ժամանակ տևում է մինչև որ երիտասարդը սթափվում է և սկսում հագիւ հագ մի քանի խօսք էլ ինքն ասել:

Մի քիչ յետոյ Թէննետը դարձեալ սկսում է խօսել. «Գեղեցիկ հրացան ունէք:

«Այո», պատասխանում է երիտասարդը, «ես կարծում եմ թէ ամբողջ շրջակայքում գրանից գեղեցիկը չը կայ»:

«Խնդրեմ ներէք», շարունակեց միւսը, «որ այս բանում ես տարբեր կարծիքի եմ. ես գիտեմ մի ուրիշ հրացան, որ ձերնից շատ աւելի գեղեցիկ ու նպատակայարմար է»:

«Կը կամենայի տեսնել», ասեց ազնւականը փոքր ինչ վիրաւորված:

«Ուրախութեամբ ցոյց կը տամ», պատասխանեց Թէննետը, «եթէ միայն նեղութիւն քաշէք իմ տունս գալ: Ես էլ երիտասարդութեանս ժամանակ որսորդութեան մեծ սիրահար էի և այս իմ ասած հրացանը քեռիս է ինձ պարգևել:

Շատ ուրախ կը լինէի, եթէ կամենայիք ինձ հետ միասին գնալ մեր տուն»:

Երիտասարդը շարած մնացել էր: Քանի անգամ նա ամենքի առաջին ասել էր, թէ ինքը երբէք ոտք չը պիտի դնէր Թէննետի տան շէմքին: Հիմա ի՞նչ անի, հետը գնա՞: Կասկած չկայ որ իր բարեկամները կը լսեն և ծաղրածութեան առարկայ կը դարձնեն իրան: Միթէ այդ սիրալիր հրաւերից հրաժարվի: Դա էլ իսկապէս շատ անքաղաքավարի կը լինէր: Սաստիկ պատերազմ տեղի ունեցաւ նրա ներսում: Թէննետը մի անգամ էլ շատ քաղցրութեամբ կրկնեց իր հրաւերը և երիտասարդը այլևս հակառակել չը կարողացաւ: Գնացին և շուտով հասան նրանց տունը: Հրացանը բերին և նայեցին, և իսկապէս երիտասարդը խոստովանեց, թէ իր կեանքում այդպէս գեղեցիկ հրացան տեսած չէր: Հրացանը նրա աչքը բռնել էր. ի՞նչ ասես նա չէր տալ, ոչ մի գումար չէր խնայիլ նա այս հրացանը ձեռք բերելու համար: Նա շատ սիրուն էր և գեղեցիկ, յարմար և ճարտարաբանտ մի գործ, և բացի գրանից—շատ թեթև: Ինչքան որ «մուշտարու» աչքով էր նայում նա հրացանին, նոյնքան աւելի էր ցանկանում ունենալ նրան: Թէննետը այդ նկատելով՝ ասեց. «վաղուց է, որ հրաժարվել եմ որսորդական գուարճութիւններից:

և այս հրացանն էլ այլևս արժէք չունի ինձ համար: Թէ որ կը ցանկանաք, ես ուրախութեամբ կը տամ ձեզ այս հրացանը»:

«Սակայն մի և նոյն ժամանակ մի փափագ էլ ունեմ, որի կատարումը շատ սրտիս ընկած է», շարունակեց Թէննետը: «Եթէ այս փափագը տեղ տաք, հրացանը կարող էք ձեր սեփականութիւնը համարել: Դա մի փոքր բան է, բայց ինձ համար շատ կարևոր է»:

Երիտասարդը սաստիկ կարմրեց: Կարծես թէ նա ինքը արդէն գիտէր, թէ ինչ պահանջ պիտի անի Թէննետը: Անշուշտ նա կամենում է խօսք առնել, մտածում էր նա, որ ինքը յաճախէ նրանց կրօնական ժողովները: Բայց ինքը ուխտել էր չի գնալ այն ժողովներին, և նա չէր կարող իր ուխտը դրժել, թէ ոչ ծաղրի առարկայ կը դառնար ամբողջ շրջակայքում: Ո՛հ, ինչպէս զղջում էր նա հիմա, որ Թէննետի հրաւերն ընդունեց և նրանց տունն եկաւ: Չլինէր նա էլ և նրա գեղեցիկ որսորդական հրացանն էլ: Սակայն և այնպէս ինչ սրտագին էր նրա առաջարկութիւնը, ինչ թանկագին էր նրա հրացանը: Երիտասարդը յուզված կանգնած էր այնտեղ, աչքերը ցած գցած, դողդոջուն ձեռքը հրացանի վրա դրած: Նա բոլորովին չը գիտէր ինչ անէր և սրանով նրա շփոթութիւնը միշտ

աւերանում էր: Վերջապէս նա կամենում էր այդ լուծեանը վերջ դնել և որ և է պատճառ բերելով առաջարկութիւնը մերժէր: Նա վեր նայեց և նկատեց քարոզչի դէմքի վրա մեղմ լըրջութիւն և սիրով լի կարեկցութիւն: Խօսք դուրս չ'եկաւ նրա բերանիցը. մերժել, հրաժարվել նա չը կարողացաւ, համարեա թէ ակամայ համաձայնեց նա, և շատ լարված հարցրեց.

«Եւ ի՞նչ է ձեր փափագը»:

«Որ այս երեկոյ ինձ մօտ թէյի ֆնաք», պատասխանեց Թէննետը:

«Երիտասարդը չէր սպասել այդ: Բերանաբաց նայում էր քարոզչին: Իսկ սա առաջվանից շատ աւելի քաղցրութեամբ կրկնեց իր հրաւերը—և երիտասարդը ուզէր չուզէր ստիպված էր համաձայնվել: Ընթրիքի պատրաստութիւնները տեսնվեցան: Ամբողջ ընտանիքը և ծառայողներն էլ սեղան նստեցին»:

«Մենք սովորութիւն ունենք», սկսեց ընտանիքի հայրը, «հացից առաջ Աստուծոյ խօսքից մի գլուխ կարդալ. յոյս ունեմ, որ դուք դէմ չէք դրան»:

Երիտասարդը շրթունքը կծեց և մի անգամ էլ զղջաց որ թոյլ գտնվեցաւ և նրա տունը եկաւ: Բայց և այնպէս գլխով արաւ և համաձայնութեան նշան արեց: Սկսվեց Աստուծոյ

խօսքի ընթերցանութիւնը: Մի գլուխ կարդալուց յետոյ ամենքը չոքեցին աղօթքի: Երիտասարդի թուշերը վառվում էին յուզմունքից, նըրա սրտի բաբախումը չափազանց ուժգին էր: Նա մտածեց հեռանալ, բայց մի գաղտնի ոյժ ստիպում էր նրան մնալ: Ի՞նչ անի, ի՞նքն էլ ծունկ դնի:—Ո՛չ մի ժամանակ: Դա կը լինէր ուրանալ իր մինչև հիմա արած բոլոր վճիռներն ու որոշումները: Բայց ի՞նչ կը մտածեն այս ծունկ դրած աղօթողները՝ իրանց տան սովորութիւնը արհամարհող օտարականի մասին: Այդպիսի մտածմունքները տակն ու վրա էին ահողում երիտասարդի ներսը: Թէննետը ինչպէս երևում էր ոչ մի բան չէր նկատում: Մեծ ոգևորութեամբ օրհնութեան պատարագ էր մատուցանում նա տէրերի Տիրոջը: Նա երեխայական մտերմութեամբ և աղաւինութեամբ խօսում էր իր երկնաւոր Հօրը հետ, և ամեն իր խնդրածքները գցում էր Նրա սրտին: Նրա հասարակ և սրտաբուրդ խօսքերը առանց տպաւորութեան չը մնացին և՛ երիտասարդ ազնւականի համար: Բայց ի՞նչպէս լարվեց նրա ուշադրութիւնը, երբ յանկարծ լսեց հետևեալ խօսքերը.

«Մի բան էլ խնդրում ենք քեզանից, սիրելի Հայր: Դու տեսնում ես այս երիտասարդին, որ այսօր առաջի անգամ մեր մէջ է գտնվում:

Դու մի անգամ տուել ես ինձ այն վստահութիւնը, թէ Դու նրան էլ պիտի փրկես: Ո՛հ, ցոյց տուր այդ մոլորեալին քո սիրոյ և շնորհաց կարողութիւնը, բաց արա նրա աչքերը, որ ճանաչէ Քեզ և Քո արդարութիւնն և սրբութիւնը, նոյպէս և Քո ողորմութիւնը—և սա արա՛ այսօր—այսօր, մինչև մեր իրարից բաժանվելը»:

Երիտասարդը փշրվեց և խոնարհվելով ընկաւ իր ծունկերի վրա: Այդ խօսքերը անդիմադրելի զօրութիւնով թափանցեցին մինչև նըրա հոգու խորքը: Մնցեալի բոլոր մոլորութիւններն ու մեղքերը զգուշացնող լրջութիւնով կանգնեցին նրա աչքերի առաջ: Եւ աղօթողի խօսքերն էլ միշտ աւելի ստիպողական և ջերմեռանդ էին դառնում: Կարծես շատ նետերի պէս կպչում էին ազնւականի սրտին և խղճմտանքին: Վերջապէս էլ չը կարողացաւ ծածկել իր զգացումները. նա վերկացաւ իր չոքած տեղից և դողողուն ձայնով բացականչեց.

«Բաւական է, դուք ինձ շահեցիք, Տէրը յաղթող գտնվեց»:

Հանդիսաւոր հանգարտութիւն տիրեց այս խօսքից յետոյ: Ամենքը վերկացան: Երիտասարդը գրկեց իր հայր-բարեկամին: Արտասուքները հեղվում էին նրա աչքերից: Վերջապէս հասաւ

Տիրոջ ժամը, սղորմութեան ժամը և այս մտ-
լորված ոչխարի համար: Սուրբ Հոգոյ կարողու-
թիւնը յանկարծ և հրաշալի կերպով ինքնաճա-
նաչութիւն և զղջում էր զարթեցրել երիտա-
սարգի սրտի մէջ և կատարելապէս նորոգել նը-
րան: Նա ևս Փիլիպպէի բանտապետի պէս հար-
ցրեց. «Ի՞նչ պէտք է անեմ, որ փրկվեմ», և նա
էլ բանտապետի պէս հաւատաց Աստուծոյ պարզ
և բարի լուրին, և իմացաւ, որ Տէր Յիսուսն է
արել նրա համար ամեն բան և խաչի վրա նրա
տեղակ բեռովելով՝ դատաստանը իր վրա առել:
Նոյն իրիկունը երիտասարդ ազնւականը՝ այժմ
իր համար շատ սիրելի դառած Աւետարանի այս
հաւատարիմ պատգամաւորի հետ միասին գոհա-
ցաւ Տէրիցը նրա անպատմելի սիրոյն համար:

Սիրելի ընթերցող, ինչպէս որ բարի Հովիւը
երիտասարդ ազնւականի ետևից ման եկաւ, որ
նրա հոգին յաւիտենական կորստից փրկէ, նոյն-
պէս ման է գալիս և քո ետևից: Գուցէ լսել ես
արդէն յորդորանքներ ու զգուշացնող ձայներ.
գուցէ լսել ես երբեմն նրա քաղցր հրաւիրող
ձայնը, և դու էլ այն երիտասարդի պէս ես ա-
րել—նրա հրաւերներից փախել ես, նրա յորդո-
րանքները և զգուշացնող ձայները ականջի ետև
ես զցել: Բայց նա դեռ էլի միշտ կանգնած ըս-
պատում է: Նրա սէրը դեռ չի յոգնել: Այս թեր-

թով նա դարձեալ թակում է քո սրտի դուռը:
Լաւ մտածիր, ամեն քայլով դու աւելի ես մո-
տենում յաւետենականութեան, աւելի ես մո-
տենում դատաստանին: Մի կարծիր, թէ յաւի-
տենական Դատաւորի սուրբ ներկայութիւնում
կանգնել կարողանալու համար բաւական է ար-
տաքին ազնիւ կեանքը կամ բաւական է կրօնա-
կան գեղեցիկ դաւանութիւնը: Ոչ, բարեկամ,
դրա համար աւելի բան է պէտք: Իրա համար
պէտք է Աստուծոյ Գառի արիւնով սրբված մի
խղճմտանք. որովհետև այս արիւնն է միայն
սրբում ամեն մեղքից: Թոյլ տուր ինձ, այսօր,
մինչև մեր իրարից բաժանվելը յիշեցնեմ քեզ
մի քանի տեղեր Աստուծոյ անսուտ, յաւիտե-
նական, մնայուն խօսքից: Այո, թոյլ տուր նոյն-
խի բարի Հովիւի ասած մի քանի խօսքերը քեզ
յիշեցնեմ: Նա ասել է.

«Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ
իմ խօսքը լսողը և ինձ ուղարկողին հաւատա-
ցողը, յալիսենական կեանք ունի. եւ դասասան
չի մնիլ»: (Յովհ. Ե, 24:)

«Արդ նորան ասեցին. ի՞նչ անենք, որ Աս-
տուծոյ գործերը գործենք: Յիսուսն էլ պատաս-
խանեց և նրանց ասեց. Սա է Աստուծոյ գործը,
որ հաւատաս Նորան, որին նա ուղարկեց»: (Յովհ. Գ, 28. 29:)

«Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ
Ես եմ ոչխարների դուռը... եթէ մէկն ինձա-
նով ներս մտնէ, կ'ապրի. և կ'մանէ և դուրս
կ'գայ, և արօտ կ'գտնէ... Ես եմ բարի հովիւր.
բարի հովիւն իր անձը դնում է ոչխարների հա-
մար»: (Յովհ. Ժ. 7. 9. 11:)

«Ահա շուտով գալիս եմ և իմ վարձքն ինձ
հետ, որ ամեն մէկին կ'հասուցանեմ ինչպէս
իբ գործը կ'լինի... Երանելի են նորա պատուի-
րանքները պահողները, որ նորանցը կ'լինի իշ-
խանութիւնը կեանքի ծառի վրայ... Ես եմ Դաւ-
թի արմատը և սերունդը և առաւօտեան պայ-
ծառ աստղը: Եւ հոգին և հարմն ասում են, Եկ.
և նա որ ծարաւ է՝ թող գայ եւ նա որ կամե-
նում է՝ քող առնէ կեանքի ջուրը ձրի»: (Յայտն.
իբ, 12. 14. 16. 17:)



Ա. Բ. 1

ՅՄ

ՅՄ 0

ԳԻՆԸ 3 ԿՈՂ.

«Եարի Լոր» ֆրիստենեական քերքը կրասարակ-
վում է ամիսը երկու անգամ: Տարեկան բաժա-
նորդագիւնն է 2 տոպի: Հասցեն. Եակու. Բեդա-
ւիյա „Եարի Լոր“

«Ազգային գրադարան»



NL0161845